# Մշակույթ

Այսօր աշխարհում «բեմարվեստի իմպրեսարիո» կամ «մենեջեր» կոչումների տակ գործող մարդիկ գրեթե նույն ձեւով են աշխատում. Ոչ ծախսելով մեծ տաղանդ ունենալ, դիմացինի կամ «արտադրանքի» (արվեստագետի մասին է խոսքը) շնորհքներից օգտվելով նրանք են հետամուտ նախ ծախսերը փակել, առավել շատ շահել եւ որպես կազմակերպիչ հասարակայնության մեջ մեծ անուն հանել: Նախկին զայրույթը, դեկտեմբերի 9-ին Շանզելիզեում տեղի ունեցած զալա համերգի կազմակերպիչ Ալեն Ժիրոլինգի վրա, գցենք հարցը: Սա մեր պատմության ընթացքում ֆրանսիական կամ պատերազմի դաշտում ցուցաբերված նույն սխալների կրկնությունն է, այս անգամ գեղարվեստական բեմի դաշտի վրա ծավալված: Սկզբի օրինակին հետեւելով ասենք,

[illegible]

## Շանզելիզեի «զալա» համերգի «անատոմիան»

***Նորից վերադառնալով տարիներ առաջ մեր ստորագրած մի ֆրանկական հոդվածին (տես «Ազգի» 92 թ. մարտի 14 թիվը), կրկնում ենք «...աշխարհի ամենաֆաղաֆակիրը, զարգացած ֆաղաֆում եթե մի համակրելի տիկին կամ օրիորդ փեշերը վեր ֆշած, առանց վարտիքի փողոցում սկսի ման գալ եւ հետո էլ ոժգոհություն հայտնի, թե իրեն «բռնաբարել են», կլինի ծիծաղելի եւ խղճալի: Այս դեպքում «բռնաբարողին» խոսք չունենք ասելու, ֆանի որ նրան հրահրողինն է առաջին հանցանքը»:***

[illegible]

## ԾՈՒԹԱՀԱՆԴԵՍ

## Պահարե՝ Հայկ Պետրոսյան

### Բանաստեղծի, դերասանի 100-ամյակը



Լրացավ բանաստեղծ, դերասան, Վրաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, Հայաստանի գրողների միության անդամ Պահարեի (Հայկ Պետրոսյան, 1895-1968) հարյուրամյակը: Այդ հոբելյանի առթիվ Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպված ցուցահանդեսից տեղեկանում ենք, որ նա ծնվել է Նոր-Բայազետում եւ փոխադրվել Թիֆլիս, որ երկար տարիներ հանդես է եկել Ստ. Շահումյանի անվան հայկական թատրոնում: Նրա մարմնավորած կերպարներից են Քաջ Նազարը, Պաղտասար աղբարը, Մարտիրոսը («Նամուս»), Բորչինսկին («Ռեվիզոր»), Գիփոր («Պեպո») եւ այլն: Բանաստեղծ Պահարեի առաջին ստեղծագործությունը տպագրվել է 1912-ին Դոնի Ռոստովի «Լույս» շաբաթաթերթում: Թիֆլիսում հրատարակվել են նրա «Գյուղերի կանչը», «Գեղարքունիք», «Հայրենիք» ժողովածուները, իսկ Երեւանում «Թատերական հուշեր» եւ «Ստեփան Քափանակյան» գրքերը:

Պահարեն մտերիմ կապերի մեջ է եղել հայ մշակույթի նշանավոր գործիչների, այդ թվում Ավետիք Իսահակյանի հետ, որը բարձր է գնահատել նրա բանաստեղծական վաստակը: Մի առիթով Իսահակյանը ասել է. «Եթե դու ոչինչ գրած չլինեիր, մոռ նվիրած բանաստեղծությունն էլ բավական էր քեզ բանաստեղծ համարելու»:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

## ԽԾԲԱՆԿԱՐ

## Նշանավոր «Ռոլինգ սթոունզը» կթողարկի իր հին երգերը

Վերջերս հռչակավոր «Բիթլզ» խմբի հին եւ անհայտ ձայնագրությունների թողարկումից հետո ոչ պակաս հռչակավոր «Ռոլինգ սթոունզի» երաժիշտները հայտարարեցին, որ իրենք եւս կոմպակտ սկավառակով եւ տեսաժապավենով կթողարկեն իրենց չհրապարակված երգերը: Խոսքը Rock & Roll Circus համերգի մասին է, որտեղ «Ռոլինգ սթոունզի» կազմում վերջին անգամ հանդես էր գալիս խմբի վաղամեռիկ կիթառահար Բրայան Ջոնսը: Համերգին մասնակցում էին նաեւ «Հու», «Ջեթրո թալ» խմբերը, Ջոն Լեննոնը եւ Էրիկ Քլեպտոնը: Երգիչ Բոբ Դիլանը նույնպես մտադիր է հրապարակել 1966 թ. իր լոնդոնյան համերգի ձայնագրությունը, իսկ «Ջենեսիս» խումբը կթողարկի իր հին համերգների ձայնագրությունները, երբ խմբի երգիչը դեռ Պիտեր Գաբրիելն էր:

## Էլթոն Ջոնը շահեց դատը

Բրիտանական թերթերից մեկը զրպարտչական հոդված էր զետեղել այն մասին, որ երգիչ Էլթոն Ջոնն իբր տառապում է մարսողության խանգարումներով եւ Հոլիվուդում կազմակերպված երեկույթներից մեկի ժամանակ իբր սնունդը դուրս է թքել անձեռոցիկի մեջ: Էլթոն Ջոնը օրերս շահեց զրպարտչի դեմ իր հարուցած դատը, ստանալով 150 հազար դոլլար: Երգիչը հայտարարել էր, որ ինքը առհասարակ չի եղել այդ երեկույթում եւ որոշել էր դատարանում ապացուցել իր ասածները:

## Ջոն Լեննոնի որդին կստանա հոր ժառանգության մի մասը

Աշխարհահռչակ երգիչ Ջոն Լեննոնի որդին՝ Ջուլիանը Յոկո Օնոյի հետ համաձայնության է եկել այն բանի շուրջը, որ ամեն տարի կստանա հոր ժառանգության մի մասը: Քանի որ Ջուլիանի անունը նշված չի եղել հոր կտակում, նրա մահից հետո 15 տարի շարունակ որդին որեւէ եկամուտ չի ստացել 400 մլն դոլլար կազմող ժառանգությունից:

## Ոսկի հարստանալու դատճառ

Բելգիայի մայրաքաղաքի բնակիչներից մեկին հաճախ էին անհանգստացնում հարեւանները, որոնք ուշ երեկոյան բարձրաձայն միացնում էին իրենց մագնիտաֆոնը եւ լսում ժամանակակից ռոք երաժշտություն: Մի օր էլ այս մարդու համբերությունը հատավ: Նա վերցրեց մուրճը եւ սկսեց ամբողջ ուժով հարվածել պատին, փորձելով գոնե այդ ձեւով փոքր ինչ խելքի բերել աղմկարար հարեւաններին: Մեծ եղավ նրա զարմանքը, երբ պատից պոկվեց երկու աղյուս, որոնց հետեւում հայտնվեց մի հին սափոր: Այն բերնեբերան լի էր ոսկեդրամներով եւ հին բանկարժեք զարդերով:




digitised by A.R.A.R.@

